ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 21 հուլիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1

դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա.Գյուլումյանի

Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Լևոն Բարսեղյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Լևոն Բարսեղյանը (ներկայացուցիչ Արտակ Զեյնալյան) 07.07.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

- «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 81, 61, 62, 63-րդ և 24, 25, 26, 28, 29, 30, 33, 34, 38, 40, 41, 42, 44, 45, 46, 58, 48, 50, 52, 51, 53, 60-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, այնքանով, որքանով պատճառված ոչ գույքային վնասի հատուցում չի նախատեսում՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված բոլոր հիմնարար իրավունքների խախտման դեպքում:

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 81, 78, 61, 62, 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի «համարժեք չափով» դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան հաղորդած բովանդակությամբ հանդերձ:

Կամ

- Բացահայտել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի՝ «համարժեք չափով» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը»:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դիմողը նշում է, որ խնդրո առարկա գործի շրջանակներում դատական կարգով հաստատվել էր, որ վարչաիրավական հարաբերություններում վարչական մարմնի կողմից խախտվել էր իր՝ կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքները: Այդ իրավունքներից միայն անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման համար է նրան տրամադրվել ոչ նյութական վնասի հատուցում, քանի որ վիճարկվող դրույթը չի սահմանում մյուս երեք իրավունքների խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցման կարգն ու պայմանները: «Այնինչ, Կոնվենցիան և Սահմանադրությունը երաշխավորում են Կոնվենցիայով սահմանված բոլոր իրավունքների խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցման իրավունք ու պետություններին պարտավորեցնում են իրենց օրենսդրությամբ երաշխավորել, ապահովել ու պաշտպանել այդ իրավունքները»:

Դիմողը գտնում է, որ թեև իր կոնվենցիոն և սահմանադրական իրավունքների խախտումը ճանաչվել էր դատական կարգով, սակայն այդ իրավունքների խախտումը վերացված չէ ու ինքը պահպանում է «զոհի» կարգավիճակը, այսինքն՝ շարունակում են խախտված մնալ իր՝ կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության կոնվենցիոն և սահմանադրական իրավունքները:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթով նախատեսված սահմանափակումը՝ կապված վարչական մարմինների կողմից մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ոչ իրավաչափ միջամտության դեպքում նյութական և ոչ նյութական հատուցում տրամադրելու հետ, թերի իրավակարգավորման պատճառով ոչ իրավաչափորեն սահմանափակում է արդյունավետ

դատական պաշտպանության, վնասի հատուցման ու այն հիմնական իրավունքները և ազատությունները, որոնց նկատմամբ միջամտությունը տեղի է ունեցել՝ անկախ այդ իրավունքների խախտումը հանրային իշխանության մարմինների կողմից ճանաչված լինելու փաստից:

Դիմողը գտնում է, որ ՀՀ ներպետական մարմինների կողմից վնասների հատուցումը պետք է կատարվի այնպիսի չափով, ինչպիսին իրավակիրառ պրակտիկայով ձևավորել է Եվրոպական դատարանը Հայաստանի մասնակցությամբ գործերով կայացված վճիռներով, այլապես անձը կպահպանի «զոհի» կարգավիճակը՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով, և կպահպանի գանգատով Եվրոպական դատարան դիմելու և արդարացի փոխհատուցում պահանջելու իրավունքը:

Ըստ դիմողի՝ իրավակիրառ պրակտիկան վիճարկվող դրույթի՝ «համարժեք չափով» եզրույթին տվել է այնպիսի մեկնաբանություն, որն էականորեն տարբերվում է Եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 41-րդ հոդվածով սահմանված՝ «արդարացի փոխհատուցում» եզրույթին հաղորդած բովանդակությունից:

3. Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա նյութերը՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը պարզեց, որ առկա չեն դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Լևոն Բարսեղյանի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմքունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

21 հուլիսի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/1-16